



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2025 թվականի N 1419-Ա

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՎԱՐՉԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ
ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 76, 77, 78 հոդվածների, Հրապարակային սակարկությունների մասին ՀՀ օրենքի, «Տեղական ինքնակառավարման Մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, ՀՀ Կառավարության «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001թ. ապրիլի 12-ի N286 որոշման պահանջներով, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի վարչական սահմաններում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, դեռևս վարձակալությամբ չտրված գյուղատնտեսական նշանակության հողատարածքները վարձակալությամբ տրամադրելու նպատակով 2025 թվականի նոյեմբերի 12-ին հայտարարել մրցույթ:
2. Հանձնարարել մրցութային հանձնաժողովին օրենքով սահմանված կարգով հայտարարել և կազմակերպել մրցույթը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1420-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 4-ՐԴ
ՆՐՔԱՆՑՔ ԹԻՎ 3/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄԵԼԱՆՅԱ ԺՈՐԱՅԻ ԻԳԻԹՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 02.10.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 23.10.2025թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Մելանյա Ժորայի Իգիթյանի /ծնված 07.01.1957թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաք Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.04 հա, ինչը փաստացի կազմում է 0.04489 հա, որը Մելանյա Ժորայի Իգիթյանի /ծնված 07.01.1957թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 167.40 քմ և ինքնակամ կառուցված 29.90 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1975-2008թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.04489 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 3/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մելանյա Ժորայի Իգիթյանի /ծնված 07.01.1957թ-ին /, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.04 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00489 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.04489 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 167.40 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1975-1985թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2008թ-ին ինքնակամ կառուցված 29.90 քմ մակերեսով շինությունը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 4-րդ նրբանցք թիվ 3/1 բնակելի տուն հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1421-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ ՓՈՂՈՑ 11 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՐԶԱՆՈՒՇ
ՄԱՄԻԿՈՆԻ ՄԽՈՅԱՆԻ, ԱՐՄԵՆ ԼԵՎԻԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 09.04.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 13.10.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան փողոց 11 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.09 հա, ինչը փաստացի կազմում է 0.08026 հա, որը Արմեն Լևիկի Արզումանյանին /ծնված 28.04.1970թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 233.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1958-1970թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.08026 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան փողոց 11 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Պարզանուշ Մամիկոնի Մխոյանի /ծնված 29.03.1938թ-ին/, Արմեն Լևիկի Արզումանյանի /ծնված 28.04.1970թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.08026 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 233.40 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1958-1970թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան փողոց, 1-ին փակուղի 1 հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1422-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ 2-ՐԴ ՓԱԿՈՒՂԻ 13 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ՝ ԼՈՒՍԻՆԵ ԺՈՐԱՅԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՈՒ
ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 28.04.2006թ. տրված սեփականության իրավունքի թիվ 2015266 վկայականը, 20.02.2020թ-ին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, որակավորում ունեցող անձ Արշակ Հենրիկի Դավոյանի /որակավորման վկայականի համար 0119՝ տրված 27.02.2012թ./ կողմից 26.11.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023JDBYQJ ծածկագիրը, «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.06867 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու

կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ քաղաքի Դ. Դեմիրճյան փողոց 2-րդ փակուղի 13 հասցեում գտնվող, 2011թ-ին ինքնակամ կառուցված 312.7 քմ արտաքին /273.2 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը և 2.13 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1209 /մեկ հազար երկու հարյուր ինը/ ՀՀ դրամ, ընդամենը $314.83 \times 1209 = 380650$ /երեք հարյուր ութսուն հազար վեց հարյուր հիսուն/ ՀՀ դրամ սահմանված վճարով ճանաչել օրինական:

2. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Դ. Դեմիրճյան փողոց, 2-րդ փակուղի, 13 հասցեն:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1423-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՐՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Գավառ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով, **որոշում եմ**

1. Ստեղծել Գավառ համայնքում 2026 թվականին Գավառ համայնքի մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

- 1) Կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել Գավառ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:
- 2) Հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:
3. Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն հավելվածի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման մասին ընդունման իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1424-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի ասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 17.01.2025թ. արտահերթ նիստի թիվ 2-Ն որոշման պահանջները, սոցիալական աջակցության տրամադրման հանձնաժողովի 07.11.2025թ. եզրակացությունը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով նախատեսված գումարից 95 000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ դրամական հատուցում տրամադրել համապատասխան իրավաբանական կազմակերպությանը Գավառ քաղաքի Ազատության 2 -րդ փակուղի, շենք 4, բն. 26 հասցեի բնակիչ՝ Արա Արտավազդի Օրդյանին դեղեր տրամադրելու նպատակով:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1425-Ա

**ԳԱՎԱՌ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ 43
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄԻՀՐԱՆ ԳԱՌՆԻԿԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 22.07.2025թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, 08.10.2025թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 43 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.17 հա, ինչը փաստացի կազմում է 0.16691 հա, որը Միհրան Գառնիկի Բարսեղյանին /ծնված 03.05.1973թ-ին/ ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական կառուցված 189.40 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1975թ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.16691 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց 43 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Միհրան Գառնիկի Բարսեղյանի /ծնված 03.05.1973թ-ին/ հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.16691 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 189.40 քմ մակերեսով շինությունների /կառուցված 1975թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:


2. 2011թ-ին ինքնակամ կառուցված 149.60 քմ ընդհանուր մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնակամ շինություններ:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ քաղաք, Հացառատ թաղամասի Ազատամարտիկների փողոց, 43 հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarighamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1426-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-001-0312-0030 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0028 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 198-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի Գ. Միքայելյան փողոց 1/4 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 03072025-05-0060, 05-001-0312-0030 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0028 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը ավտոտնակ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 18-ին հայտարարել աճուրդ:

2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 195000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1427-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-001-0345-0064 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0022 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 202-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի Արծրունի եղբայրների փողոց 2/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 14082025-05-0061, 05-001-0345-0064 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0022 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը ավտոտնակ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 18-ին հայտարարել աճուրդ:
2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 154200 (մեկ հարյուր հիթսունչորս հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1428-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-001-0312-0029 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0028 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 197-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի Գ. Միքայելյան փողոց 1/3 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 20052025-05-0094, 05-001-0312-0029 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0028 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը ավտոտնակ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 18-ին հայտարարել աճուրդ:
2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 195000 (մեկ հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ:
3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1429-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-001-0446-0104 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00326 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 200-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 22/20 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 20062025-05-0034, 05-001-0446-0104 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00326 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը առևտրի և սպասարկման կետ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 18-ին հայտարարել աճուրդ:

2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 342600 (երեք հարյուր քառասուններկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1430-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-001-0446-0105 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00652 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 201-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի Զորավար Անդրանիկի 1-ին փողոց 22/21 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 20062025-05-0036, 05-001-0446-0105 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00652 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը առևտրի և սպասարկման կետ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 17-ին հայտարարել աճուրդ:

2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 460800 (չորս հարյուր վաթսուն հազար ութ հարյուր) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1431-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-046-0111-0062 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.25469 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 196-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի գյուղ Ծաղկաշեն 3-րդ փողոց 22 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 08102025-05-0010, 05-046-0111-0062 կադաստրային ծածկագրով, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 0.25469 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը անասնաշենք կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 17-ին հայտարարել աճուրդ:

2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 1885000 (մեկ միլիոն ութ հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1432-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-078-0632-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.0506 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 199-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի գյուղ Սարուխան Լ. Կրոյան փողոց 2/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 12062025-05-0042, 05-078-0632-0002 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0506 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը բնակելի տուն կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 17-ին հայտարարել աճուրդ:
2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 689200 (վեց հարյուր ութսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ:
3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 նոյեմբերի 2025 թվականի N 1433-Ա

**ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ
ԳՏՆՎՈՂ 05-071-0101-0033 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.00705 ՀԱ
ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16)-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետերի, ՀՀ հողային օրենսգրքի 63-րդ, 67-րդ և 68-րդ հոդվածների դրույթներով, Գավառ համայնքի ավագանու 10.11.2025թ. թիվ 11 նիստի թիվ 203-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1. Գավառ համայնքի գյուղ Նորատուս Գ. Գրիգորյան փողոց 8/1 հողամաս հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող՝ սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական թիվ 28072025-05-0065, 05-071-0101-0033 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.00705 հա մակերեսով սահմանափակումներ չունեցող հողատեսքը առևտրի և սպասարկման կետ կառուցելու նպատակով աճուրդային եղանակով օտարելու համար 2025 թվականի դեկտեմբերի 17-ին հայտարարել աճուրդ:

2. Հողամասի համար աճուրդի մեկնարկային գին սահմանել՝ 698000 (վեց հարյուր իննսունութ հազար) ՀՀ դրամ:

3. Հանձնարարել աճուրդի կազմակերպչին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել աճուրդը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 12
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 1434-Ա

ՍՆՈՒՆԴԻ ՓԱԹԵԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և 23-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-մասի 1-րդ կետի, «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով սոցիալական աջակցության ծառայությունների տրամադրման հանձնաժողովի առ 13.11.2025 թ.եզրակացությունը, **որոշում եմ**

Գավառի համայնքապետարանի 2025թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել 17 400 /տասնյոթ հազար չորս հարյուր / ՀՀ դրամ դրամական արժողությամբ սնունդի փաթեթ

1.Հարությունյան Վարդ Լյուդվիկի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
2.Աղաջանյան Ռիմա Գուրգենի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
3.Տուդոյան Լաուրա Հովհաննեսի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
4.Թովլադալցյան Ազիզ Հայրապետի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
5.Բունիաթյան Լյուբա Թորգոմի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
6.Ներսիսյան Անահիտ Գվիդոնի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
7.Գափոյան Սոնիկ Արարատի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
8.Նազարյան Արմենուհի Հարությունի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
9.Հայթյան Բելլա Ժորայի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
10.Ասատրյան Նարինե Խաչիկի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
11.Ավագյան Ռիմա Անուշավանի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
12.Մնոյան Ահարոն Յուրիկի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
13.Կարապետյան Շուշանիկ Ռաֆիկի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ
14.Հակոբյան Շուշան Գրիգորի	17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ

15.Մովսիսյան Անի Գառնիկի

17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ

16.Ղազարյան Ամալյա Հայկի

17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ

17.Քոչարյան Թամարա Հարությունի

17 400/տասնյոթ հազար չորս հարյուր/ՀՀ դրամ

Ընդամենը՝ 295 800/ երկու հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր/ՀՀ դրամ

2. 295 800 /երկու հարյուր իննսունհինգ հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ փոխանցել «Դառնա» ՍՊ ընկերությանը թվով 17 շահառուներին սնունդի փաթեթները մատակարարելու նպատակով:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



2025թ. նոյեմբերի 13
ք. Գավառ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 1435-Ա

«ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԶԱՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԾՈՎԱԿԱԼ ԻՍԱԿՈՎԻ ՓՈՂՈՑ
ԹԻՎ 5 ՀԱՍՑԵԻ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍՄԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ N
1927-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի
34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24)
կետի դրույթներով և հիմք ընդունելով ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ
իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 13.06.2024թ. N Կ-
13062024-05-0162 որոշումը, Գավառ համայնքի ղեկավարի 20 հոկտեմբերի 2023
թվականի N 1927-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ղեկավարի 20 հոկտեմբերի 2023 թվականի N 1927-Ա որոշման
հղումներում «/Հասմիկ Մարտիրոսի Հովսեփյանի /ծնված 00.00.1955թ-ին/ բառերի
փոխարեն կարդալ՝ /Հասմիկ Մարտիրոսի Հովսեփյանի /ծնված 00.00.1936թ-ին/»
բառերը:

2. Գավառ համայնքի ղեկավարի 20 հոկտեմբերի 2023 թվականի N 1927-Ա որոշման
առաջին կետում, «/Հասմիկ Մարտիրոսի Հովսեփյանի /ծնված 00.00.1955թ-ին/
բառերի փոխարեն կարդալ՝ /Հասմիկ Մարտիրոսի Հովսեփյանի /ծնված 00.00.1936թ-
ին/» բառերը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

2025թ. նոյեմբերի 13
ք. Գավառ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarighamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 1436-Ա

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ
ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 11 նիստի թիվ 207-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Հայաստանի Հանրապետությունից որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Գավառ համայնք, գյուղ Նորատուս, Սևանի փողոց, 13-րդ նրբանցք, 1 հասցեում գտնվող 4689 (չորս հազար վեց հարյուր ութսունինն) քմ մակերեսով Հայաստանի Հանրապետության սեփականություն հանդիսացող հողամասը՝ Գավառ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող «Նորատուսի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մանկապարտեզի շենքի օգտագործման և սպասարկման համար շահագործելու նպատակով:

2. Հանձնարարել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գրիգոր Ռազմիկի Բոշյանին հանդես գալու Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեում և Երևան քաղաքի կենտրոն նոտարական գրասենյակում, համայնքի անունից կնքելու Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Նորատուս գյուղի Սևանի փողոց 13-րդ նրբանցք 1 հասցեում գտնվող 4689 քմ մակերեսով հողամասը Գավառ համայնքին նվիրաբերելու պայմանագիրը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2025թ. նոյեմբերի 13
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 նոյեմբերի 2025 թվականի N 1437-Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածի 1-ն մասի, Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16) կետի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 11 նիստի թիվ 208-Ա որոշումը, **որոշում եմ**

